

զիւրիմաց և ախորժելի հանդիսանալու համար իւր պատճառաբանութիւնը փոխանակ գիտական՝ իմաստափրական ցամաց նախադասութեանց մէջ խտացնելու, կու տայ անոնց սովորական զրուցատրութեան մը քողը, և ընտանեկան երեկոյթներու հանդերձանաց տակ կը ներկայացնէ զգացմանց նկատմամբ, նաև՝ Ընդհանուր Դիտողորինենք, և յետոյ կը, շօչափէ մի առ մի հոգերանական հետեւել զիխաւոր խընդիրները. ի՞նչ է հոգին, ուստի՝ կը ծագին զգացմունքը, հոգոյ դրութիւն, զգացումնելուրդ և կամք՝ իրեւ մարդկութեան կատարելազործիչ երրեակ տարերը, որոնց կը յարչ նաև Գործնական Դիտակ:

Որովհետեւ դաստիարակաց և ծնողաց զիխաւորապէս տղողուած է այս գրութիւնը և լոկ իրը նախափորձ մը կը ներկայանայ հոգերանական շարք մը ուսումնափրուած տեսութեանց, իրաւունց չունինց խստապահանջ ըլլալու, և միրով Կ'ողջունենք զայս իրը նախափորձ պապայ ընտրելագոյն ուսումնափրութեանց, և չենք ուզեր մանել ներքին պարունակութեան իմաստափրական կէտերու վերլուծման. անցողակի միայն կը նշմարենց որ զգացմանց ծագումն ուսումնափրուած միջոց, մինչ յայտնապէս զանազանութիւն կը զրուի հին և նոր զպրոցի մեկնութեանց ու բացատրութեանց մէջ, նոր զպրոցի ա. ւելի հակում մը կը մայ գեռ միշտ, այսու հանդերձ որ կը մերժուին (աակայն շատ համառօտի) անոր մեսութիւնը. և որոշ չեն զծուիր զբայորեանց և զգացմանց, (լաւագոյն են այս բառերը քան ինչ որ գիտական լիզուով սովոր ենք ստորին և բարձրագոյն անութեանց արդիւնքն ու ազդեցութիւնը որ կրնային ունենալ ամրող ուսումնափրուած տեսութեանց վրայ, եթէ փոխանակ ամենավերջ մալու, զրբին սկիզբները տեղաւորուած ըլլային:

Շատ լաւ են ընդհակառակն դաստիարակութեան նկատմամբ արտայայտած մի քանի զաղափարը, և զիխաւորապէս այն՝

թէ մտաց հրահանգութենէ աւելի դաստիարակութիւնը պէտք է զիմնուի սրտի կրթութեան վրայ և թէ ուսումնական ծրագրաց մէջ զիխաւոր տեղին զրաւելու են զրագիտութիւնն, գեղարուեսուց և պատմութիւն, բայց ոչ այն ցամացը ու մտաց թմրեցուցիչ պատմութիւնը, լի ինձողուած անուններու և թուականներու շարքերով, այլ այն՝ որ վերլուծում մ'է իւրացանչիւր զարերու հոգերանական կացութեան և փայլուն նկարագիր զիցազանց վեհ արարցներոււ:

Հ. 8. Արգեր

ԱՄԵՆՈՒԻՆ ՏԱՐԵՑՈՅՑԸ: — Թէոդիկի այս երրորդ տարուան հատորը Մամուլի Ազատութեան զգիիշ արշալուսին մէջ ծնունդ գտնելով իրաւամբ կը գերազանցէ նախընթաց երկու տարեցոյցը: Սա համարիափառարան մըն է համով հոսով նիւթերու հանողուածութեան և կարուանութիւնն մի փնտուեր մէջը, բայց գիտցիք որ այսպէս աւելի զեղցիկ է, վան զի որ և է ձանձրոյթի պահուու ստուար հաստին որ և է էլլը բանալ կարգալով ախորդ կը զգաս, բան կը սորփիս: Հայ գործիչներու հարտադրութիւններուն, զէմբերուն, գործերուն կը ծանօթանաս առանց միան յօննենելու:

Բախնիդիր վելալով Կ'ըսնէք որ թէ պատկերներու և թէ ամբողջ զրութիւնները մաքուր և ճաշկակի տպուած են: Բանաստեղծութիւններ, Գիտական և Ուսումնական ծանօթութիւններ, Մասնագրական, Պատմական, իմաստափրական, Դրական, Առողջապահական, Բնապատմական և այլն, ևայլ զրուագներ, ասցացուածներ կրկին և կրկին կը կարդացուին միշտ թարմ մնալու յաստիթիւնը պահելով:

334 էշերէ բաղկացած այս 15 զուրուցնոց Ամենուն Տարեցոյցը՝ որ աշխատափրուած է յօցու Ազգային Արքանցինի յիրաւի ասմանազին է: Մնեփ աւելորդ կը համարինք թէոդիկին մաղթելու որ զալ տարի զեռ աւելի կատարեալ Տարեցոյց մը պատրաստէ, զամանակի նիմքը իւր երեք տարուան հատորին որպէս կը ներկայանայ, տոկում, յարաւի, և իր ծեսներիին սիրանար անձնաւորութիւնն մը: Ահա ասոր համար մէնք վրաստան ենք որ զալ տարի Հայ մատենագրութիւննը Ամենուն տարեցոյց անունով զմայլելի նոր հաստոր մ'ալ պիտի ունենայ:

Հ. 9. Տ.

ՈՄԱՆԾ ՏԱՐԵՑՈՅՑԸ: — Երուանգ Օտեան 16 փոր էշերու մէջ, Ազգային ներկայ գործերուն և գործիչներուն սրամիտ, զաւետական երգիծարական պարերութիւններու ուղարկած է: Այս հերասադրիոյ Դ. Դապարէթեան հրատարակչին՝ կամ Պուսոյ մէծ զրավաճառներուն 1 զրու ողջ վճարովը կը ստանայ համ մը այդ գրոյքէն, քառորդ մը ժամ զրաւեանալու համար: